# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2016 թվականին տարեկան կատարած աշխատանքների*

2017թվականի հունվարի 17-ին ժամը 12$^{00}$ –ին Վարդանաշենի դպրոցի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ժողով, որի ընթացքում Վարդանաշեն համայնքի ղեկավար՝ Արթուր Մանուկյանը ներկայացրեց 2016թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ համայնքի ավագանու և համայնքի բնակչության առջև:
Ներկա էր Արմավիրի մարզի հողաշինության տեսչության պետ Ա. Դարբինյանը:

Ներկա էին ավագանու հինգ անդամները և համայնքի 45 բնակիչներ:

2016 թվականի ընթացքում Վարդանաշենի համայնքապետարան է մուտքագրվել 123 գրություն, իսկ դուրս է եկել 104 գրություն:

Համայնքի ղեկավարի մոտ կատարվել է 62 / վաթսուներկու / քաղաքացիների ընդունելություն:

Համայնքապետարան մուտք է եղել 7 քաղաքացիների դիմումներ , որոնց բոլորին էլ ժամանակին պատասխանվել է:

2016 թվականի ընթացքում կայացել է ավագանու 6 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 23 որոշում:

2016 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 29 որոշում և արձակվել է 13 կարգադրություն:

**Ասեմ, որ 2016 թվականին բյուջեյով նախատեսված հողի հարկի 6300,0 հազ. դրամից հավաքագրվել է 3651.5 հազ. դրամ , որը կազմում է 57% , գույքահարկի 100,0 հազ. դրամից հավաքագրվել է 1000.0 հազ. դրամ, որը կազմում է 100 % , վարձավճարների 850,0 հազ. դրամից հավաքագրվել է 250.0 հազ. դրամ, որը կազմում է 30% : Դոտացիայի 19198,3 հազ. դրամից տրվել է 19198,3 հազ. դրամ, որը կազմում է 100, % :**

**Ընդհանուր առմամբ համայնքի վարչական բյուջեով 2016թվականին նախատեսնված 37630.4հազ.դրամից հավաքագրվել է 25057.0 հազ.դրամ 88% :**

**-2016թվականին հողի օտարումից նախատեսվել է մուտքագրել 9550.0 հազ. դրամ ,**
**-2016թվականի ծախսային մասով 30526.2հազ. դրամից ծախսվել է 23309.05 հազ. դրամ, որը կազմում է 87%:**

**Ըստ հոդվածների կատարվել են հետևյալ ծախսերը՝**

Աշխատավարձ 14850.05 հազ, դրամ, սոց օգնություն անապահով ընտանիքներին 1400.0հազ. դրամ , էլեկտրաեներգիայի վարձ գյուղապետարանի 1300.8 հազ. դրամ, էլեկտրաեներգիայի վարձ խմելաջրի 960.7 հազ. դրամ, խմելու ջրի խորքային հորի պոմպերի վերականգնման համար 600,0 հազ. դրամ :

2016 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի 8 բնակիչներ զորակոչվեցին Հայկական բանակ, իսկ 7-ը վերադարձան պարտադիր զինվորական ծառայությունից:

2016 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում շինարարության (քանդման) թույլտվություններ չեն տրվել:

2016 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում շինարարության (քանդման) թույլտվություններ չեն տրվել:

2016 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում կառուցվել է շուրջ 1կմ երկարությամբ ցերեկային լուսավորության ցանց, որը գիշերային ժամերին լուսավորում է կենտրոնական փողոցը::

2016 թվականի ընթացքում համայնքում կատարվել է կանոնավոր աղբահանություն(ամսական 3 անգամ):

2016 թվականին Վարդանաշեն համայնքի Վարչական տարածքի 952,0 հա հողատարածքից 509,0 հա ոռոգման տակ է եղել, որից սեփականաշնորհված է 394,0 հա , 74,2 հա վարձակալական:

2016թվականին Վարդանաշեն համայնքում ցանվել է 85 հա ցորեն,15հա գարի և 275հա բոստանբանջարանոցային կուլտուրաներ:Հիմնականում համայնքի հողօգտագործողները մշակված կուլտուրաներից ստացված արտադրանքից գոհ են մնացել :

2016 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից, օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության, պահանջների պահպանման նկատմամբ, ասեմ, որ ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

2016 թվականի ընթացքում հասարակական տրանսպորտի աշխատանքը եղել է կանոնավոր՝ Երևան քաղաքի և Արմավիր քաղաքի հետ կապող տրանսպորտային միջոցները աշխատել են սահմանված ռեժիմով:

2016 թվականին համայնքի դաշտամիջյան ճանապարհների և համայնքի փողոցների բարեկարգման մեծածավալ աշխատանքներ են տարվել,որը լինելու է շարունակական:

Վարդանաշեն համայնքում 2016 թվականին կանոնավոր գործարկվել են երեք առևտրի օբյեկտ և մեկ գազալցակայան , որոնց նկատմամբ համայնքապետարանի կողմից իրականացվել է հսկողություն սանիտարական կանոնների պահպանման և առևտրի պատշաճ իրականացման համար:

Վարդանաշեն համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում է 166 աշակերտ,համայնքում գործում է նախակրթարան՝ սաների թիվը 22 է : 2016 թվականին համայնքի ակումբի շենքում գործել է սպորտային / բռնցքամարտի / խմբակ:

2016թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում անցկացվել են շաբաթօրյակներ, կատարվել է կանաչ գոտիների ավելացումներ: Համայնքապետարանի դիմաց հիմնվել է Արցախի քառօրյա կռվում զոհված զինծառայողների հիշատակի պուրակ:

2016 թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքում կա 93 թոշակառու և 23 նպաստառու:

2016թվականի ընթացքում Վարդանաշեն համայնքի 12 քաղաքացիներ գրանցվել են գործազրկության կենտրոնում և ստացել են գործազրկության նպաստներ:

2016 թվականի ընթացքում համայնքում կազմակերպվել և անցկացվել են անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ , կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

2017թվականի բյուջեով նախատեսվել է եկամուտների հավաքագրում 28.080.400հազ.դրամ և ծախսերի կատարում 28.080.400հազ.դրամ չափով:

Հարգելի համագյուղացիներ ես անձամբ իմ ուժերը ներ եմ դնելու համայնքի ավագանու և համայնքապետարանի աշխատակազմի միջոցով կատարելու ամեն հնարավորը, որպեսզի բարելավվի մեր համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը:

## Բարձրացված հարցեր

- Սահմանի ներսում շուրջ 30հա ոռոգելի հողերի ջրով ապահովման մասին:

(Հ. Բեգլարյան)

- Վարդանաշեն համայնքի գերեզմանատանը ջրագծի անցկացման մասին:

(Հ. Գաբրիելյան)

- Վարդանաշեն համայնքի խմելաջրի ցանցի վերակառուցման մասին:

(Ա. Սահակյան)

- Համայնքի մշակույթի տան՝ ակումբի շենքի վերանորոգման և կահավման մասին:

(Փ. Բաքոյան)

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ